ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
ՀՀՎԱ-ԵՄԾՁԲ-23/1 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք.Երևան **«03» «նոյեմբերի» 2022թ.**
ժամը 17:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝

Վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ՝ Բագրատ Բադալյան

Հանձնաժողովի անդամներ՝

Վարչապետի աշխատակազմի ղեկավարի օգնական՝ Սուրեն Հովհաննիսյան

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ՝ Կարեն Գիլոյան

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ՝ Ավագ Ավանեսյան

Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ՝ Գարիկ Բոշյան

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սպորտի քաղաքականության վարչության սպորտի բարձրագույն նվաճումների բաժնի գլխավոր մասնագետ՝ Արայիկ Ալավերդյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Սոնա Շիրինյան

Բացակայում էին

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսաբյուջետային վարչության բյուջետային ծրագրավորման և վերլուծությունների բաժնի գլխավոր մասնագետ Աիդա Մարգարյան

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սպորտի քաղաքականության վարչության մանկապատանեկան սպորտի բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար՝ Արմենուհի Մադաթյան

---

1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

«ՀՀՎԱ-ԵՄԾՁԲ-23/1» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են նախաորակավորման հրավերը հրապարակելու օրվան հաջորդող 17-րդ օրը, ժամը 11:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետի հետ:

Ընդունվել է որոշում. Կողմ – 6 , դեմ – 0:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները

2.1 Վարչապետի աշխատակազմի կողմից կազմակերպված «ՀՀՎԱ-ԵՄԾՁԲ-23/1» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հնարավոր մասնակիցների անվանումները	Հնարավոր մասնակիցների տվյալները
«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ	Հեռ. 096 77 01 17, էլ.փոստ fin@factory.am
«Պերֆեկտ» ՍՊԸ	Հեռ. 033 88 88 88, էլ.փոստ hayk.simonyan05@gmail.com
«Դոմինո վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ	Հեռ. 095 95 96 96, էլ.փոստ info@dominoproduction.am

«Աութսորս» ՍՊԸ	Հեռ. 033 88 88 85 էլ.փոստ info@osllc.am
«Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ	Հեռ. 055 60 50 70 էլ.փոստ info@background.am

2.2 «Շարմ Հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացվել է սահմանված ժամկետից հետո, ուստի այն չի ընդունվել հանձնաժողովի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 39-րդ կետը:

Ընդունվել է որոշում. Կողմ – 6 , դեմ – 0:

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի, «Դոմինո վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ-ի և «Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացված են սահմանված պահանջներին համապատասխան:

3.2 «Պերֆեկտ» ՍՊԸ-ի և «Աութսորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում, հրավերով պահանջվող համանման պայմանագրերի գնման առարկան լրացված է ոչ լիարժեք: Հրավերով սահմանված է, որ համանման են համարվում հանրային, զանգվածային միջոցառումների (օրինակ՝ սպորտային միջոցառումներ, համերգներ և այլն) կազմակերպման հետ կապված պատշաճ մատուցված և պատվիրատուի կողմից ընդունված ծառայությունների (ներառյալ տեխնիկական հագեցվածության ապահովումը (բեմահարթակ, ձայնային, լուսային և այլ անհրաժեշտ սարքավորումներ)) մատուցված լինելը:

Վերոգրյալով պայմանավորված հանձնաժողովը որոշեց՝

նիստը կասեցնել, և ծանուցել «Պերֆեկտ» ՍՊԸ-ին և «Աութսորս» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել համանման համարվող ծառայությունների ամբողջական նկարագիրը:

Ընդունվել է որոշում. Կողմ – 6 , դեմ – 0:

4. Հայտերի շտկման մասին

4.1 «ՀՀՎԱ-ԵՄՁԲ-23/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի նախաորակավորման ընթացակարգի հայտերի բացման նիստը կասեցվել և ծանուցվել էր «Աութսորս» ՍՊԸ-ին և «Պերֆեկտ» ՍՊԸ-ին անհամապատասխանությունների շտկման նպատակով: «Աութսորս» ՍՊԸ-ն և «Պերֆեկտ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել են փաստաթղթերը:

4.1.1 «Աութսորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

4.1.2 «Պերֆեկտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է նոր «Պայմանագրի առարկա», որը նախկին փաթեթում ներառված չի եղել, ինչպես նաև լրացված չէ ծառայության մատուցման ժամանակահատվածը:

Վերոգրյալով պայմանավորված հանձնաժողովը որոշեց՝

«Պերֆեկտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Ընդունվել է որոշում. Կողմ – 6 , դեմ – 0:

5. Նախաորակավորված մասնակիցների ցուցակը հաստատելու մասին

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ կետով, գնահատող հանձնաժողովը որոշեց.

հաստատել «ՀՀՎԱ-ԵՄԾՁԲ-23/1» ծածկագրով գնման ընթացակարգի երկու փուլով մրցույթի նախաորակավորված մասնակիցների ցուցակը՝ համաձայն ստորև ներկայացված աղյուսակի

Մասնակիցների անվանումները
«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ
«Դոմինո վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ
«Աութսորս» ՍՊԸ
«Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ

Ընդունվել է որոշում. Կողմ – 6 , դեմ – 0:

6. Առաջին փուլի հրավերի տեքստը հաստատելու մասին

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով՝ գնահատող հանձնաժողովն իր իրավասության շրջանակներում որոշեց.

հաստատել «ՀՀՎԱ-ԵՄԾՁԲ-23/1» ծածկագրով ընթացակարգի երկու փուլով մրցույթի առաջին փուլի հրավերի տեքստը /կցվում է/:

Ընդունվել է որոշում. Կողմ – 6 , դեմ – 0:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

7.1 «ՀՀՎԱ-ԵՄԾՁԲ-23/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա առաջին փուլի հայտերի ներկայացման վերջնաժամկետին, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1 հասցեում:

Ընդունվել է որոշում. Կողմ – 6 , դեմ – 0:

Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը

Նախագահ՝ Բագրատ Բաղայան

Անդամներ՝ Սուրեն Հովհաննիսյան

Կարեն Գիլոյան

Ավագ Ավանեսյան

Գարիկ Բոշյան

Արայիկ Ալավերդյան

Քարտուղար՝ Սոնա Շիրինյան